ՌՈՒՍ-ՈՒԿՐԱԻՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2022.2-77

Հիմնաբառեր. *տրանսֆերտներ, արժեզրկում, սպառում, պատժամիջոցներ, ազդեցություն*

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

ORCID - https://orcid.org/0000-0003-2226-6435

Հոդվածում ուսումնասիրվել է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՌԴ-ի դեմ կիրառվող պատժամիջոցների ազդեցությունը ՀՀ եկող տրանսֆերտների վրա: Ավանդաբար, տրանսֆերտները կարևոր նշանակություն ունեն ՀՀ տնտեսության համար, ու թեև տրանսֆերտներ/ՀՆԱ հարաբերակցությունը վերջին տարիներին կրճատման միտում է դրսևորում, սակայն դեռևս շարունակում է բարձր մնալ: ՀՀ տնտեսության համար տրանսֆերտների գլխավոր աղբյուրը ՌԴ-ն է, որի տեսակարար կշիռը ևս նվազում է՝ այդուհանդերձ, պահպանելով իր գերակշռող դերը: Պատժամիջոցների հետևանքով արժեզրկվում է ռուսական ռուբլին, որն էլ հանգեցնում է դրամական կամ դոլարային արտահայտությամբ տրանսֆերտների կրճատմանը: Բացի այդ, պատժամիջոցները կխթանեն ՌԴ-ում գործազրկության մակարդակի աճը, որն էլ, քանակական առումով, դարձյալ կհանգեցնի տրանսֆերտների կրճատմանը: Վերջինս շղթայական ազդեցություն կունենա նախ՝ տնային տնտեսությունների սպառման, այնուհետև պետության հարկային եկամուտների վրա:

Ակնհայտ է, որ ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները ՀՀ տնտեսության վրա կունենան իրենց ազդեցությունը, որը դրսևորվելու է ՀՀ եկող տրանսֆերտների կրճատմամբ՝ պայմանավորված ռուբլու արժեզրկմամբ, դեպի ՌԴ արտահանվող ապրանքների մրցունակության անկմամբ, ինչպես նաև պատժամիջոցների տակ հայտնված ռուսական ընկե-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

ՀՀ բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած փոխանցումներ, մլն ԱՄՆ դոլար[1]

րությունների՝ ՀՀ-ում գտնվող դուստր ընկերությունների կողմից արտահանման կազմակերպման ռիսկերի ի հայտ գալով:

ՌԴ-ի դեմ պատժամիջոցներին առաջինն արձագանքեց ռուբլու փոխարժեքը, որը տարվա սկզբի համեմատ արժեզրկվել է ավելի քան 30%-ով: Արժեզրկումն ազդում է ՀՀ-ից ՌԴ արտահանվող ապրանքների գնային մրցունակության վրա, քանի որ արտահանողներն այլևս չեն կարող նախկին գներով արտահանել և ստիպված են բարձրացնել գները: Արժեզրկումն ազդում է նաև այն տնային տնտեսությունների սպառման վրա, որոնք ՌԴ-ից դրամական փոխանցումներ են ստանում: ՌԴ-ն, ավանդաբար, արտասահմանից եկող տրանսֆերտների գլխավոր աղբյուրն է, իսկ ՀՀ տնտեսությունը որոշակի կախվածություն ունի այդ տրանսֆերտներից (գծապատկեր 1):

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, բանկերի միջոցով արտերկրից փոխանցումների զգալի մասը ՌԴ-ից է, որոշակի չափով՝ ԱՄՆ-ից, իսկ մյուս երկրների մասնաբաժինն այդքան էլ մեծ չէ: Եթե համեմատենք 2013 թ.-ի հետ, ապա ՌԴ-ից եկող դրամական փոխանցումները թե՛ ծավալային առումով, թե՛ տեսակարար կշռով զգալիորեն զիջում են 2013 թ.-ի ցուցանիշին: Այսպես՝ եթե 2013 թ.-ին ՌԴ-ից դրամական փոխանցումները կազմում էին ավելի քան 1,7 մլրդ ԱՄՆ դոլար կամ ընդհանուրի 73,2%-ը, ապա 2021 թ.-ին՝ ընդամենը 41,04% (գծապատկեր 2), իսկ ծավալային առումով, գրեթե կրկնակի պակաս են 2013 թ. ցուցանիշից: Փոխարենն ավելացել է ԱՄՆ-ի և այլ երկրների մասնաբաժինը հատկապես 2020-2021 թթ.-ին: ԱՄՆ-ի մասնաբաժինը 2013 թ.-ի 6,6%-ից 2021 թ.-ին հասել է 27,5%-ի՝ հիմնականում պայմանավորված այդ երկրում համավարակի սոցիալական հետևանքների մեղմման աջակցության ծրագրերով, որոնք ավելացրել են բնակչության եկամուտները՝ նպաստելով նաև ՀՀ-ում այդ երկրից դրամական փոխանցումների ծավալի մեծացմանը:

Պատժամիջոցների հետևանքով մի կողմից արժեզրկվել է ռուբլին՝ հանգեցնելով ՌԴ-ից եկող՝ դոլարային կամ դրամային արտահայտությամբ տրանսֆերտների կրճատմանը, մյուս կողմից՝ արժևորվել ԱՄՆ դոլարը՝ հանգեցնելով ԱՄՆ-ից և այլ երկրներից եկող՝ դրամային արտահայտությամբ տրանսֆերտների ավելացմանը: Այսինքն՝ այն տնային տնտեսությունները, որոնց եկամուտը ՌԴ-ից եկող դրամական փոխանցումներն են, որոշակի չափով կրճատելու են սպառումը, իսկ ԱՄՆ-ից և այլ երկրներից եկամուտ ստացող տնային տնտեսությունների սպառումը կարող է աճել: Կարևոր է ընդգծել, որ թեև ՌԴ-ից

[1] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:





ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

ՀՀ բանկերի միջոցով արտերկրից մուտք եղած փոխանցումներում երկրների մասնաբաժինը, 2013 թ. և 2021 թ., %[2]

փոխանցումները կրճատվել են, սակայն դեռևս ունեն 41% մասնաբաժին, և ՌԴ ռուբլին արժեզրկվել է 30 և ավելի տոկոսով, մինչդեռ ԱՄՆ դոլարն արժևորվել է 7-8%-ով: Այսինքն՝ քանակական առումով, սպասվում է սպառման ծավալների անկում, որն իր ազդեցությունն է ունենալու նաև ՀՆԱ-ի վրա: 2021 թ.-ին տնային տնտեսությունների սպառումը կազմել է ՀՀ ՀՆԱ 73,3%-ը, իսկ վերջինիս նպաստումը ՀՆԱ 5,7% աճին՝ 2,6 տոկոսային կետ: Այս տվյալները ցույց են տալիս, որ տնային տնտեսությունների սպառման կրճատումը բացասաբար կանդրադառնա ՀՀ ՀՆԱ-ի վրա: Մյուս կողմից, եթե համեմատենք տրանսֆերտներ/ՀՆԱ հարաբերակցության 2013 թ.-ի և 2020 թ.-ի ցուցանիշները, կտեսնենք, որ կախվածության էական նվազում կա (գծապատկեր 3): Եթե 2013 թ.-ին անձնական դրամական փոխանցումներ/ՀՆԱ հարաբերակցությունը բավական բարձր էր՝ ավելի քան 19%, ապա այժմ 10-11%-ի շրջանակում է: Սա նույնպես բարձր ցուցանիշ է, ըստ որի՝ Հայաստանը 2021 թ.-ին Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 10 առաջատար երկրների ցան-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Ըստ վճարային հաշվեկշռի՝ դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումները և ՀՆԱ-ի հետ հարաբերակցությունը[3]

[2] Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ:
[3] Նույն տեղում:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի 10 առաջատար երկրներն ըստ տրանսֆերտներ/ՀՆԱ հարաբերակցության[4]

կում է՝ այնպիսի երկրների կողքին, ինչպիսիք են Բոսնիան և Հերցեգովինան, Ալբանիան, Մոնտենեգրոն, Ուզբեկստանը և այլն (գծապատկեր 4):

Ինչպես կարելի է նկատել գծապատկեր 3-ից, դրամական փոխանցումները 2013 թ.-ին գերազանցել են 2 մլրդ ԱՄՆ դոլարը, սակայն 2014 թ.-ից հետո ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների և նավթի գների անկման հետևանքով ռուբլու արժեզրկումը հանգեցրել է ՀՀ եկող դրամական փոխանցումների էական կրճատման: 2015 թ.-ին, 2014 թ.-ի համեմատ, տրանսֆերտները 2 մլրդ ԱՄՆ դոլարից իջել են 1,4 մլրդ ԱՄՆ դոլարի շեմին՝ անկում ապրելով շուրջ 30%-ով, և սա այն դեպքում, երբ տարբեր գնահատականներով[5] 2014 թ.-ի պատժամիջոցները ՌԴ ՀՆԱ-ի վրա տարեկան ունեցել են 0,2-2% զսպող ազդեցություն: Իսկ որոշ նախնական գնահատականներով[6] այժմյան աննախադեպ պատժամիջոցները կարող են հանգեցնել ՌԴ տնտեսության 7-9% անկման[7]: Նման անկման պարագայում, բացի ռուբլու արժեզրկումից, ՌԴ-ում նկատվելու է նաև գործազրկության մակարդակի աճ, որը, իր հերթին, հանգեցնելու է ՌԴ-ից «հոսող» տրանսֆերտների կրճատման, իսկ արդեն նկատելի գնաճը՝ աշխատանքային միգրանտների եկամուտների նվազման՝ այս դեպքում անուղղակիորեն ազդելով տրանսֆերտների վրա: Համաշխարհային բանկի կանխատեսումներով՝ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով արտերկրից ՀՀ եկող տրանսֆերտները 2022 թ.-ին կկրճատվեն 19%-ով[8]: Կարծում ենք՝ սա շատ նախնական գնահատական է, և ՀՀ տնտեսությունում տրանսֆերտների կրճատումը կարող է հասնել 20%-ից ավելիի: Իսկ տրանսֆերտների նման անկումն էականորեն կազդի ամբողջական պահանջարկի, որն էլ իր հերթին՝ պետության հարկային եկամուտների վրա: Մյուս կողմից, պատերազմի հետևանքով էականորեն աճել է Հայաստան ժամանող ռուսների թիվը, ինչը որոշակիորեն դրական ազդեցություն կարող է ունենալ սպառման ծավալների վրա, սակայն նրանց ստույգ թի-

[4] Migration and Development Brief 35, https://www.knomad.org/sites/default/files/2021-11/Migration_Brief%2035_1.pdf, p. 43.
[5] Western Sanctions and Russia/ What are they?, In-Depth Analysis, European Parliamentary Research Service, Martin Russel, February 2022, p. 19, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2022/698930/EPRS_IDA(2022)698930_EN.pdf
[6] Russian economy could shrink by 7% as result of Ukraine sanctions, Richard Partington, 02 March 2022 https://www.theguardian.com/world/2022/mar/02/russia-economy-could-shrink-by-7-per-cent-as-result-of-ukraine-sanctions-war-recession-covid
[7] Two Weeks Into War, Russia's Economy Has Rarely Fared Worse Than Now, Bloomberg News, March 11 https://www.bloomberg.com/news/articles/2022-03-11/two-weeks-into-war-russian-economy-rarely-fared-worse-than-now
[8] Russia-Ukraine Conflict: Implications for Remittance flows to Ukraine and Central Asia, DILIP RATHAEUNG JU KIM|MARCH 04, 2022, https://blogs.worldbank.org/peoplemove/russia-ukraine-conflict-implications-remittance-flows-ukraine-and-central-asia

վը և Հայաստանում մնալու ժամկետները հայտնի չեն, հետևապես՝ ազդեցության չափը դեռևս ճշգրտորեն հնարավոր չէ գնահատել: Այնուամենայնիվ, դա չի կարող ամբողջովին փոխհատուցել տրանսֆերտների կրճատման հետևանքով սպառման նվազումը:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ Հայաստանն այժմ ՌԴ-ից եկող փոխանցումներից կախված չէ այնպես, ինչպես 2013-2014 թթ.-ին, միաժամանակ, ներկայիս պատժամիջոցներն էլ իրենց տեսակով և խորությամբ առավել խիստ են, քան 2014 թ.-ից հետո կիրառվողները, ուստի ռուբլու հետագա արժեզրկումը, ինչպես նաև գործազրկության հավանական աճը կարող են էապես ազդել տրանսֆերտների, հետևաբար՝ դրանք տնօրինող տնային տնտեսությունների սպառման, շղթայաբար նաև պետության հարկային եկամուտների վրա: Պետությունը, սակայն, որևէ լծակ չունի՝ կանխելու տրանսֆերտների կրճատումը, իսկ խոցելի խմբերի վրա ազդեցությունը մեղմելու համար որոշակի աջակցություն, օրինակ՝ կոմունալ վճարների մի մասի սուբսիդավորմամբ, կարող է տրամադրել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Migration and Development Brief 35, https://www.knomad.org/sites/default/files/2021-11/Migration_Brief%2035_1.pdf, p. 43.
2. Russian economy could shrink by 7% as result of Ukraine sanctions, Richard Partington, 02 March 2022, https://www.theguardian.com/world/2022/mar/02/russia-economy-could-shrink-by-7-per-cent-as-result-of-ukraine-sanctions-war-recession-covid
3. Russia-Ukraine Conflict: Implications for Remittance flows to Ukraine and Central Asia, DILIP RATHAEUNG JU KIM|MARCH 04, 2022, https://blogs.worldbank.org/peoplemove/russia-ukraine-conflict-implications-remittance-flows-ukraine-and-central-asia
4. Western Sanctions and Russia/ What are they?, In-Depth Analysis, European Parliamentary Research Service, Martin Russel, February 2022, p. 19, https://www.europarl.europa.eu/RegData/etudes/IDAN/2022/698930/EPRS_IDA(2022)698930_EN.pdf
5. Two Weeks Into War, Russia's Economy Has Rarely Fared Worse Than Now, Bloomberg News, March 11, https://www.bloomberg.com/news/articles/2022-03-11/two-weeks-into-war-russian-economy-rarely-fared-worse-than-now

Рузанна ТАДЕВОСЯН
Младший исследователь исследовательского центра «Амберд», аспирант, АГЭУ

РОССИЙСКО-УКРАИНСКИЙ КОНФЛИКТ: ДЕНЕЖНЫЕ ПЕРЕВОДЫ

В статье рассматривается влияние санкций, введенных против России после российско-украинского конфликта, на денежные переводы в Армению. Традиционно денежные переводы оказывали значительное влияние на экономику Армении, и хотя соотношение денежных переводов к ВВП в последние годы снижается, оно все еще остается высоким. Основным источником денежных переводов для экономики Армении является Россия, доля которой сокращается, но по-прежнему сохраняет свою преобладающую роль. В результате санкций российский рубль обесценивается, что приводит к сокращению денежных переводов в драмовом или долларовом выражении. Кроме того, санкции также приведут к росту уровня безработицы в России, что в количественном выражении вновь приведет к сокращению денежных переводов. Последнее окажет цепное воздействие сначала на потребление домохозяйств, а затем на налоговые поступления государства.

Ключевые слова: *денежные переводы, обесценивание, потребление, санкции, воздействие*

Ruzanna TADEVOSYAN
Junior researcher at «Amberd» Research Center,
PhD student, ASUE

RUSSIAN-UKRAINIAN CONFLICT: REMITTANCES

The paper examines the impact of sanctions imposed on Russia following the Russian-Ukrainian conflict on remittances to Armenia. Traditionally, remittances have had a significant impact on the Armenian economy, and even though the remittances / GDP ratio has been declining in recent years, it still remains high. The main source of remittances for the Armenian economy is Russia, the share of which is decreasing, but it still retains its predominant role. As a result of the sanctions, the Russian ruble depreciates which leads to a reduction in remittances in dram or dollar terms. In addition, the sanctions will also lead to an increase in the unemployment rate in Russia, which in quantitative terms will again lead to a reduction in remittances. The latter will have a chain effect first on the consumption of households, and then on the state tax revenues.

Keywords: *remittances, depreciation, consumption, sanctions, impact*